«ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՆԴԵՐՁԱՆՔԻ ԵՎ ԱՆԿՈՂՆԱՅԻՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N *ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/8-Կ-Կ*

ք. Երևան «____» մայիսի 2018 թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ԱՁ Կարեն Սարգսյանը, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

2.5 ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 104-րդ կետի պահանջներին համապատասխան Պայմանագրով սահմանված Գնորդի իրավունքների և պարտականությունների իրականացումը վերապահվում է «Բյուրեղավանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **2064053** (Երկու միլիոն վաթսունչորս հազար հիսուներեք) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	«Կարեն Սարգսյան» Ա/Ձ
ք. Երևան Կառավարական տուն 3	ք. Երևան, Գայի 1/106
ՀՎՀՀ՝ 01506515	ՀՎՀՀ՝ 25268814
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ	«ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220115140216000	Հ/Հ 002-269363-001
ղեկավար ..... Ա. Գրիգորյան	Ա/Ձ..... Կ. Սարգսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« » մայիսի 2018 թ. կնքված
ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/8-Կ-Կ ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
1	18000000	վերարկու ձմեռային մանկական 1	ՀՀ, ՌԴ, Չինաստան, Թուրքիա	Ձմեռային վերարկու գլխարկով, դուրսը անջրաթափանց նյութից կամ կտորից կամ կաշվին փոխարինող բարձորակ նյութից, ներսը հաստ կտորից կամ մորթուց, նախատեսված 6-18 տարեկան տղա և աղջիկ երեխաների համար, տարբեր գույների և մոդելների, հաշվի առնելով տարիքային խմբերը՝ ըստ պատվիրատուի պահանջի:	հատ	7800	390000	50	ք. Բյուրեղավան	50	Պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ.՝ պատվիրատուի գնման հայտի հիման վրա
2	18000000	բաճկոն աշնանային	ՀՀ, ՌԴ, Չինաստան, Թուրքիա	Արտաքին կտորը անջրաթափանց որակից, նախատեսված 6-18 տարեկան դպրոցահասակ երեխաների համար, պատվիրատուի ընտրության համար ապահովել ապրանքի բազմազանությունը:	հատ	7800	234000	30	ք. Բյուրեղավան	30	Պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ.՝ պատվիրատուի գնման հայտի հիման վրա
4	18000000	Սվիտեր բրդյա 10	ՀՀ, ՌԴ, Չինաստան, Թուրքիա	Տաք սվիտր նախատեսված 7-18 տարեկան տղաների և աղջիկների համար, երկարաթև, բնական թելերի գերակշռմամբ,գործվածքը 65% բնական բուրդ և 35% արհեստական, գույների, չափսերի ընտրությունը ըստ պատվիրատուի ցանկության , ցանկացած արտադրության համապատասխան պիտակավորմամբ:Մակնշումը լվանալու եղանակի և բաղադրության մասին պարտադիր արտադրողի կողմից:Փաթեթավորումը	հատ	3800	114000	30	ք. Բյուրեղավան	30	Պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ.՝ պատվիրատուի գնման հայտի հիման վրա

				պոլիէթիլենային փաթեթներով, յուրաքանչյուր փաթեթում 1 հատ:							
5	18000000	Սվիտեր (բամբակյա) 11	ՀՀ, ՌԴ, Չինաստան , Թուրքիա	Բլուզ-բամբակյա գործվածքից հաստությունը առնվազն 0,5սմ կլոր և սրտաձև վզով կտորի 1քմ-ի քաշը առնվազը 300գ. թելը առաջնային բամբակյա: Փաթեթավորումը պոլիէթիլենային թաղանթով: Գույնի և ձեվի ընտրությունը ըստ պատվիրատուի պահանջի: Ապահովվել առնվազն 5 տեսակ ընտրության համար:	հատ	2300	34500	15	ք. Բյուրեղ ավան	15	Պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ.՝ պատվիրատուի գնման հայտի հիման վրա
7	18000000	վերնաշապ իկ բամբակյա մանկական 2	ՀՀ, ՌԴ, Չինաստան , Թուրքիա	Վերնաշապիկ 38-42 չափերի, 100% բամբակյա, երկարաթև, հակաալերգիկ, փաթեթավորումը թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ 1 հատ, գույնի ընտրությունը ըստ պատվիրատուի, չափերը անհատական ըստ պատվիրատուի:	հատ	2700	54000	20	ք. Բյուրեղ ավան	20	Պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ.՝ պատվիրատուի գնման հայտի հիման վրա
10	18000000	Զուգագուլ պա մանկական	ՀՀ, ՌԴ, Չինաստան , Թուրքիա	Զուգագուլպա բամբակյա 90% և լայկրա 10% , 400 դեն խտության, թելի հաստությունը N300, գործվածքի քաշը 1 քմ 400 գր.: Չափսերի, գույնի և ձևի ընտրությունը ըստ պատվիրատուի պահանջի: Փաթեթավորումը պոլիէթիլենային թափանցիկ պարկերով:	հատ	800	12000	15	ք. Բյուրեղ ավան	15	Պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ.՝ պատվիրատուի գնման հայտի հիման վրա
11	18000000	Կիսագուլպ ա 1	ՀՀ, ՌԴ, Չինաստան , Թուրքիա	Կիսագուլպա/բրդյա/ աղջկա-Գործվածքը 70% բնական բուրդ ¨ 30% արհեստական, 1 քմ մակերեսային խտությունը 300 գրամ: Պատրաստի արտադրանքի չափսերը 38-44: Փաթեթավորումը պոլիէթիլենային թաղանթով փաթեթներով: Գույնի և ձեվի նախընտրությունը պատվիրատուի կողմից: Ապահովել առնվազն 5 տեսակ:	զույգ	240	2400	10	ք. Բյուրեղ ավան	10	Պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ.՝ պատվիրատուի գնման հայտի հիման վրա
12	18000000	Կիսագուլպ ա 3	ՀՀ, ՌԴ, Չինաստան , Թուրքիա	Բամբակյա, հաստ, 400դեն թելի խտության, N 300 գործվածքի քաշի, 1բ/մ 400գր. Ցանկացած արտադրության, համապատասխան պիտակավորմամբ: Պոլիէթիլենային թաղանթե փաթեթավորումով:	զույգ	270	7830	29	ք. Բյուրեղ ավան	29	Պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ.՝ պատվիրատուի գնման հայտի հիման վրա
13	18000000	Կրծքկալ	ՀՀ, ՌԴ, Չինաստան , Թուրքիա	12-18 տարեկան աղջիկների համար, բամբակյա աստառով, սպունգով, կրծկալները մետաղյա եզրերով: Տարբեր գույների, 0-3 չափի: Գույնի, ձևի, չափի ընտրությունը ըստ պատվիրատուի պահանջի	հատ	870	4350	5	ք. Բյուրեղ ավան	5	Պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ.՝ պատվիրատուի գնման հայտի հիման վրա
15	18000000	Մայկա մանկական	ՀՀ, ՌԴ, Չինաստան	Մայկա դպրոցահասակ երեխայի՝ 6-18 տարեկան, գործվածքը 100% բամբակյա, 1քմ մակերեսային	հատ	470	18800	40	ք. Բյուրեղ	40	Պայմանագրի կնքման պահից

		1	, Թուրքիա	խտությունը 300գրամ: 30-50 չափերի՝ ըստ պատվիրատուի պահանջի: Սպիտակ կամ մոխրագույն գույնի, ցանկացած արտադրության, համապատասխան պիտակավորմամբ: Մակնշումը լվանալու, եղանակի և բաղադրության մասին պարտադիր արտադրողի կողմից:					ական		մինչև 15.12.2018թ.՝ պատվիրատուի գնման հայտի հիման վրա
16	18000000	կոշիկ ամառային 1	ՀՀ, ԴԴ, Չինաստան , Թուրքիա	Բարձր որակի կաշի փոխարինողից, բաղկացած է վերնամասից, միջատակից, արտաքին ներբանից /ներբանից և կրունկից/: Կրնկամասը կոճերից ցածր, որը պետք է ծածկի ոտնաթաթի հետևի ամբողջ մակերևույթը: Քթամասը կոշտ: Տակացուն ՊՎԽ հումքից: Սև կամ մուգ շականակագույն: /37-45/չափսերի: Արկղերը պիտակավորված, պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը:	զույգ	4700	235000	50	ք. Բյուրեղ ական	50	Պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ.՝ պատվիրատուի գնման հայտի հիման վրա
17	18000000	կոշիկ ձմեռային 1	ՀՀ, ԴԴ, Չինաստան , Թուրքիա	Կաշվին փոխարինող բարձրորակ նյութից, կրկնակի կարված,հաստ տակով, պիտակավորված, 36-40 չափի, Գույնի և ձևի ընտրությունը ըստ պատվիրատոյի: Ապահովել առնվազն 5 տեսակ ընտրության համար:	զույգ	7800	390000	50	ք. Բյուրեղ ական	50	Պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ.՝ պատվիրատուի գնման հայտի հիման վրա
18	18000000	կոշիկ սպորտային	ՀՀ, ԴԴ, Չինաստան , Թուրքիա	Երեսամասը արհեստական կաշվից, միջնամասը բիազ կամ համանման, միջնադիրը բնական հումքից, տակացուն՝ առաջնային ՊՎԽ-ց, երեսամասի հետ համաձուլված: 38-42 չափի: Գույնի և ձևի ընտրությունը ըստ պատվիրատոյի: Ապահովել առնվազն 5 տեսակ ընտրության համար,տեղական կամ համարժեք:	զույգ	4800	168000	35	ք. Բյուրեղ ական	35	Պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ.՝ պատվիրատուի գնման հայտի հիման վրա
19	18000000	Սրբիչ՝ երեսի	ՀՀ, ԴԴ, Չինաստան , Թուրքիա	Գործվածքը 100% բամբակյա, /խավավոր/: Պատրաստի արտադրանքի չափսերը (90X50): Տարբեր գույների: Ցանկացած արտադրության, համապատասխան պիտակավորմամբ: Փաթեթավորումը պոլիէթիլենային թաղանթով և փաթեթներով, յուրաքանչյուր փաթեթում 1 հատ: Մակնշումը լվանալու, եղանակի և բաղադրության մասին պարտադիր արտադրողի կողմից:	հատ	670	26800	40	ք. Բյուրեղ ական	40	Պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ.՝ պատվիրատուի գնման հայտի հիման վրա
20	18000000	Գլխարկ	ՀՀ, ԴԴ, Չինաստան , Թուրքիա	Գլխարկ /բրդյա/ , գործվածքը 65% բնական բուրդ ¨35% արհեստական, միագույն /խավավոր/: 1մք-ի մակերևութային խտությունը 450 գր: Չափսերի գույնի և ձևի ընտրությունը ըստ պատվիրատուի պահանջի, 6-18 տարեկան երեխաների համար: Ապահովել առնվազն 5 տեսակ ընտրություն	հատ	970	29100	30	ք. Բյուրեղ ական	30	Պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ.՝ պատվիրատուի գնման հայտի հիման վրա

				կատարելու համար:							
21	18000000	Գոտի 2	ՀՀ, ՌԴ, Չինաստան, Թուրքիա	Արհեստական կաշվից, ճարմանդով 1.2-1,5 մ: Գույնի և ձևի ընտրությունը ըստ պատվիրատուի: Ապահովել առնվազն 5 տեսակ ընտրության համար	հատ	1120	5600	5	ք. Բյուրեղավան	5	Պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ.՝ պատվիրատուի գնման հայտի հիման վրա
23	18000000	Ձեռնոց (բրդյա) մանկական	ՀՀ, ՌԴ, Չինաստան, Թուրքիա	Ձեռնոց - գործվածքը 65% բնական բուրդ և 35% արհեստական, միագույն, /խավավոր/: 1մք-ի մակերևութային խտությունը 450 գր.: Չափսերի, գույնի և ձևի նախընտրությունը պատվիրատուի կողմից 6-18 տարեկան երեխաների համար: Ապահովել առնվազն 5 տեսակ ընտրություն կատարելու համար:	զույգ	380	15200	40	ք. Բյուրեղավան	40	Պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ.՝ պատվիրատուի գնման հայտի հիման վրա
24	18000000	Վարտիք կանացի 1	ՀՀ, ՌԴ, Չինաստան, Թուրքիա	ճտկավոր /պանտալոն/, գործվածքը 100% բամբակյա, 1 մք մակերեսային խտությունը 300 գրամ: Փաթեթավորումը պոլիէթիլենային թաղանթով փաթեթներով: չափսերը 52-56 : Ցանկացած արտադրության, համապատասխան պիտակավորմամբ:	հատ	580	14500	25	ք. Բյուրեղավան	25	Պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ.՝ պատվիրատուի գնման հայտի հիման վրա
25	18000000	Վարտիք մանկական	ՀՀ, ՌԴ, Չինաստան, Թուրքիա	Բամբակյա վարտիք, նախատեսված դպրոցահասակ երեխաների համար, գործվածքը առնվազն 70 % բամբակյա և 30% արհեստական, միջնամասում բամբակյա կրկնակի ներդիրով 1քմ մակերեսային խտությունը 300գրամ: Չափերը և ձևը՝ ըստ պատվիրատուի պահանջի: Տարբեր գույների, ցանկացած արտադրության, համապատասխան պիտակավորմամբ: Մակնշումը լվանալու, եղանակի և բաղադրության մասին պարտադիր արտադրողի կողմից:	հատ	470	16450	35	ք. Բյուրեղավան	35	Պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ.՝ պատվիրատուի գնման հայտի հիման վրա
26	18000000	Թաշկինակ 1	ՀՀ, ՌԴ, Չինաստան, Թուրքիա	Թաշկինակ- Գործվածքը 1մք մակերեսային խտությունը 240 գրամ 70% բնական /շոլկ/ և 30% արհեստական: Փաթեթավորումը պոլիէթիլենային թաղանթով փաթեթներով:Գույնի և ձևի ընտրությունը պատվիրատուի կողմից: Ապահովել առնվազն 5 տեսակ: Չափսերը 35սմx35սմ:	հատ	87	2523	29	ք. Բյուրեղավան	29	Պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ.՝ պատվիրատուի գնման հայտի հիման վրա
27	18000000	Պայուսակ մեծ	ՀՀ, ՌԴ, Չինաստան, Թուրքիա	Դպրոցական, մեծ, միջին և բարձր դասարանի աշակերտների համար, ապահովել ապրանքի բազմազանությունը	հատ	4700	141000	30	ք. Բյուրեղավան	30	Պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ.՝ պատվիրատուի գնման հայտի հիման վրա

28	18000000	Պայուսակ փոքր	ՀՀ, ՌԴ, Չինաստան, Թուրքիա	Դպրոցական,փոքր, տարրական և միջին դասարանի աշակերտների համար,ապահովել ապրանքի բազմազանությունը	հատ	3700	148000	40	ք. Բյուրեղավան	40	Պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ.՝ պատվիրատուի գնման հայտի հիման վրա
Ընդամենը							**2064053**				

* *մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

** *Գնման ժամանակացույցում նշված են առավելագույն քանակները: Քանակները կարող են փոփոխվել շահառուների թվաքանակի փոփոխությամբ պայմանավորված:*

ԳՆՈՐԴ

_____

/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 2
« » մայիսի 2018 թ. կնքված
ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/8-Կ-Կ ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1, 2, 4,5, 7, 10-13, 15-21, 23-28	18000000	Հանդերձանք և անկողնային պարագաներ					516013	825621	1032027	1238432	1444837	1651242	1857648	2064053	**2064053**

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ